լայնում է։ Մշակում է պրոգրեսիվ — եկամտային տուրք։ Աղի մշակումը և արտահանումը զարգանում է։ Շուտով կը կնքվի առևտրական դաշինք Պարսկաստանի հետ և կարիք կը լինի Շախթախթում և Ջուլֆայում մաքսատներ բանալ։

Արդարադատութեան ասպարէզում հիմնուել են արտակարգ դատարաններ և ուժեղ կռիվ է տարուել չարաշահութեան դէմ։ Արտակարգ դատարանները կը մնան մինչև բացառիկ պայմանների վերացումը։ Մեր բոլոր դատաստանական հիմնարկութիւնների գրագրութիւնը և դատավարութիւնը հայացուել են։ Օրէնքների հայացման նախապատրաստական աշխատանքները վերջանում են։ Բացուել են շրջանային դատարաններ Կարսում և Ալեքսանդրապոլում։ Բանտերի տնտեսականը բարելաւուել է, բանտերը ստեղծել են իրենց սեփական տնտեսութիւնները։

Երկրագործութեան նախարարութեան կողմից մեծ աշխատանքներ են թափուել մեր երկրի արտադրական կարողութիւնները բարձրացնելու համար։ 350,000 փութ հացահատիկ է տրուել գիւղացիութեան ցանքսերի համար։ Բնութիւնն էլ օգնութեան եկաւ մեզ, և այժմ մեր գիւղացին փայլուն բերք է հնձում ու կալսում։ Գնուել և տրուել են գիւղատնտեսական գործիքներ. կազմակերպուել է նաև խոտհարքը։ Նոր նաճատ վայրերի առատ բերքը հաւաքելու գործը դրուում է կանոնաւոր հիմքերի վրա։ Կաթնատնտեսութեան, մեղուաբուծութեան, ձկնաբուծութեան և ծխախոտագործութեան զարգացման նպատակով տրուել են նպաստներ, բացուել են ձկնաբուծարաններ Սևանայ լճի ափին, արհեստական կերպով իշխան, գեղարքունի և դրսից բերած ձկների բազմացման համար, փեթակները տուրքից ազատուած են։ Ցանուել է 1500 դեսեատին բամբակ և 100 դեսեատին ծխախոտ։ Հանքային հարստութիւնների ուսումնասիրութիւնն ամենաարագ կերպով առաջ է տարուում. մանաւանդ մեծ եռանդով ուսումնասիրուում են Օլթիի ածխահանքերը։ Հրաւիրուել են թէ Հայաստանում և թէ դուրսն ապրող մասնագէտներ, որոնք արդէն գործի վրա են։ Անտառների պահպանումը յատուկ ուշադրութեան է արժանացել։ Հողային հարցը լուծելու համար Էջմիածնի, Երևանի, Իջևանի, Դիլիջանի, Դարալագեազի գաւառներում, Վայոց Ձորում կազմուել և բարեյաջող կերպով աշխատում են հողային յատուկ կոմիտէներ։ Միայն մասնագէտ մարդկանց պակասութեան պատճառով միւս գաւառներում առ այժմ այդ չի արուում։

Աշխատանքի նախարարութիւն. — Մեր կառավարութեան հոգսն է եղել բարոք կեանք ստեղծել համայն բանւորութեան համար։ Ուշադրութիւն է դարձուել նրանց պարենաւորման, կուլտուրական կարիքների բաւարարման վրա։ Բանւորական հրատարակութիւնների համար բաց են արուած վարկեր, հիմնուել են դրադարան-ընթերցարաններ, ակումբներ։ Բանւորների և աշխատաւորների կուլտուրական կարիքներին բաւարարութիւն տալու հնարաւորութիւններ ստեղծելու համար յատկացուել է Ջանփոլադեանի թատրոնի շէնքը։ Իսկ նրանց պարենաւորումը կազմակերպելու համար կազմուել է «Հայթայթիչ մարմին», որին և տրուել են գումարներ, և այդպիսով գործնական միջոցներ են ձեռք առնուել պետական, հասարակական և մասնաւոր հիմնարկութիւնների և ձեռնարկների աշխատաւորների պարէնն ապահովելու համար։

Խնամատարութեան և վերաշինութեան նախարարութիւն. — Սովը մեղմացել է՝ տալով ձրի կամ շատ ժան գնով հաց, ալիւր և այլ մթերքներ։ Այժմ հունձի ժամանակ կամաց-կամաց այդ կերպի խնամքն էլ կրճատուում